ԿԱՐԾԻՔ

Հենրի Ազատի Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» թեկնածուական ատենախոսության մասին

Հայաստանի երրորդ հանրապետության ձևավորման և հետագա ընթացքի գիտական լուսաբանումը, միանգամայն հասկանալի պատճառներով, ամենևին էլ դյուրին խնդիր չէ: Հայոց նորագույն պատմության այդ ժամանակահատվածի ուսումնասիրումը հետազոտողից պահանջում է վեր հանել մոտ երեք տասնամյակ առաջ ձևավորված գործընթացների ծագման արտաքին և ներքին գործոնների պատճառահետևանքային կապը, անդրադառնալ ներքին կյանքում ծագած խնդիրներին, ողջ հասարակության և նրան ղեկավարող քաղաքական ուժերի կողմից ծագած բազմաբնույթ խնդիրներին, ելքերի որոնումներին և բազում այլ հիմնախնդիրներին, որոնց գիտական հետազոտությունը պահանջում է հայեցակարգային կշռադատված մոտեցում: Հիշյալ սկզբունքների հնարավորինս պահպանմամբ իրականացված հետազոտության փորձ է՝ Հ. Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» թեկնածուական ատենախոսությունը:

Ատենախոսությունում հիմնահարցի ուսումնասիրությունը իրականացվել է գիտատեսական պատշաճ մակարդակով:

Ինչպես նշում է հեղինակը իր ատենախոսության մեջ, թեմայի արդիականությունը պայմանավորված է նորանկախ պետության՝ աշխարհի երկրների միջազգային համագործակցության ինտեգրման խնդրով:

Ատենախոսի ուսումնասիրության խնդրո առարկան են 1991-2018 թթ. հայ-լեհական դիվանագիտական, առևտրատնտեսական, ռազմական, գիտամշակութային կապերը և Լեհաստանում հայ համայնքի կացությունը: Դրանով էլ պայմանավորված են ներկայացված նպատակները և խնդիրները:

Ինչպես նշում է Հ. Մատինյանը, ժամանակագրական շրջանակի ընտրությունը պայմանավորված է ՀՀ անկախությամբ սկսված հայ-լեհական ինքնիշխան դիվանագիտական, առևտրատնտեսական, գիտամշակութային կապերի և Լեհաստանում հայ համայնքի գործունեության լուսաբանման անհրաժեշտությամբ:

Հետազոտության մեջ կիրառվել են պատմավերլուծական, վերլուծահամադրական և պատմահամեմատական մեթոդներ:

Ատենախոսը հետազոտել է հայ-լեհական առևվտրատնտեսական, ռազմական, մշակութային ու գիտակրթական երեսնամյա առնչությունները, Լեհաաստանում հայ համայնքի ձևավորման և զարգացման պայմանները:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ նախկինում չի իրականացվել հայ-լեհական 1991-2018 թթ. հարաբերություններին առնչվող

արխիվային փաստաթղթերի, պաշտոնական գրությունների, վավերագրերի, գիտական և մամուլի հրապարակումների խորազնին քննություն:

Ատենախոսությունը կարող է գործնական և կիրառական գործածություն ունենալ ՀՀ բուհերի մասնագիտական ամբիոններում հատուկ դասընթացներ անցկացնելու նպատակով: Այն կարող է արդյունավետություն ապահովել ՀՀ քաղաքական և դիվանագիտական համապատասխան կառույցների գործառույթներն իրականացնելիս:

Հ. Մատինյանի ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին՝ *«Հայ-լեհական քաղաքական կապերը 1991-2018 թթ.»* գլխում ներկայացված են հայ-լեհական դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման ընթացքը, երկկողմ համագործակցության հիմնական միտումները և արձանագրված հիմնական ձեռքբերումները:

Երկրորդ՝ *«Հայ-լեհական առևտրատնտեսական և ռազմական կապերը 1991-2018 թթ.»* գլխում վերլուծված են երկկողմ առևտրատնտեսական կապերը և ռազմական համագործակցությունը՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև 2018 թվականները:

Երրորդը՝ *«Հայ-լեհական մշակութային և գիտակրթական կապերը 1991-2018 թթ.»* գլուխը անդրադառնում է տարբեր բնագավառներում երկկողմ մշակութային համագործակցության, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտների հիմնական խնդիրներին:

Չորրորդ՝ *«Լեհաստանի հայ համայնքի կացությունը 1991-2018 թթ.»* գլխում հետազոտվել և վերլուծվել են 1990-ականների արտագաղթից սկսած Լեհաստանում հայ համայնքի սկզբնավորման ու զարգացման օրինաչափությունները:

Օգտագործելով մեծ քանակությամբ սկզբնաղբյուրային նյութեր՝ արխիվային փաստաթղթեր, հրապարակված աղբյուրներ, փաստաթղթերի ժողովածուներ, տեղեկագրեր, հայերեն և օտարալեզու գրականություն, մամուլի հրապարակումներ և էլեկտրոնային աղբյուրներ՝ Հ. Մատինյանը համակարգված ներկայացրել է Հայաստանի անկախացումից հետո սկիզբ առած միջպետական հարաբերությունները:

Եզրակացություններում ամփոփ ներկայացված նյութը փաստում է.

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց ի վեր միջպետական համագործակցությունը բնականոն զարգացում ապրեց՝ ի շահ

երկու ժողովուրդների համար կենսական նշանակություն ունեցող ազգային նպատակների իրականացման:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց ի վեր միջպետական համագործակցությունը բնականոն զարգացում ապրեց՝ ի շահ երկու ժողովուրդների համար կենսական նշանակություն ունեցող ազգային նպատակների իրականացման:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Լեհաստանի Հանրապետությունն ակտիվ դերակատարություն ստանձնեց 1998 թ. հունվարին ԵԱՀԿ նախագահությունն ստանձնելուց հետո: Պաշտոնական Լեհաստանն իր քաղաքականությունն այս հարցում իրականացնում էր՝ ելնելով տարածքային ամբողջականության պահպանման և միջազգային վեճերը խաղաղ բանակցային ճանապարհով հանգուցալուծելու սկզբունքներից:

1998 թ. ի վեր Լեհաստանում ՀՀ դեսպանության, հայ համայնքի, հայկական եկեղեցական թեմերի, հայ մշակույթի համակիրների կողմից կազմակերպվեցին բազմաթիվ մշակութային, գիտական և ապրիլքսանչորսյան տարելիցի միջոցառումներ: Լեհական իշխանությունները որդեգրեցին պատմական արդարությունը վերականգնելու և դրանով նմանատիպ հանցագործությունները կանխարգելելու սկզբունքային դիրքորոշում, որի վառ արտահայտությունը դարձավ 2005 թ. ապրիլի 19-ին ԼՀ Սեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը:

Լեհական իշխանությունները հայ-լեհական դիվանագիտական քննարկումներում հանդես էին գալիս հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում միջնորդի դեր ստանձնելու պատրաստակամությամբ, սակայն այն իրականություն չդարձավ:

Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել, երբ 2005 թ. Սեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունվեց:

Հայ-լեհական առևտրատնտեսական հարաբերությունները այդքան էլ ակտիվ չզարգացան: Լեհաստանը 2012 թվականից ներդրումներ էր անում Հայաստանի տնտեսության մեջ, իսկ Հայաստանից Լեհաստան ներդրումներ չկային:

Կարևոր է նշել նաև հայ-լեհական ռազմական համագործակցության մասին, որն իր բնույթով եզակի էր ՀԱՊԿ և ՆԱՏՕ անդամ երկրների միջև փոխգործակցության տեսանկյունից: Առաջին հայ-լեհական ռազմական համատեղ ձեռնարկությունը բացվեց լեհական «Լյուբավա Արմենիա» ընկերության և ՀՀ ՊՆ համագործակցությամբ, սակայն ձեռնարկության գործունեությունը կարճ տևեց:

Հայ-Լեհական մշակութային կապերը 1991-2018 թթ. հիմնվեցին երկու երկրների ժողովուրդների պատմական հարուստ ավանդույթների և ստորագրված

միջկառավարական համաձայնագրի վրա: Լեհաստանում հայկական համայնքի, հայ մշակույթի համակիրների և հայկական կազմակերպությունների ջանքերով կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ:

Արդի շրջանում հայ-լեհական գիտակրթական կապերում, ստորագրված միջկառավարական համաձայնագիրը, կարևոր նշանակություն տրվեցին երկու երկրների հետազոտողների, դասավանդողների և ուսանողների փորձի փոխանակմանը, երկու երկրների լեզվով, մշակույթով ու պատմությամբ զբաղվողների համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Հայաստանում ուսում ստացող լեհ ուսանողների թիվը անհամեմատ պակաս է:

Հայաստանում 1990-ական թթ. արտագաղթի արդյունքում բազմաթիվ հայեր, որոնց քանակը տատանվում էր 100-150 հազարի միջակայքում հաստատվեցին Լեհաստանում: 1998 թվականին Լեհաստանի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ վիզային արտոնագրի համակարգ սահմանելուց հետո նրանցից շատերը դարձան անօրինական աշխատանքային միգրանտներ: Ժամանակի հայ-լեհական դիվանագիտական քննարկումներում այս հանգամանքն ուներ հույժ կարևոր նշանակություն:

Արդի շրջանում գաղթած հայերի մեծ մասը կարողացավ ստանալ կացության իրավունք կամ օրինականացնել իր կարգավիճակը լեհաստանում, ինչին նպաստեց հայ համայնքի բեղուն գործունեությունը:

Ընդհանուր առմամբ բավականին հաջողված աշխատանքի վերաբերյալ ցանկանում ենք ներկայացնել որոշ նկատառումներ և ցանկություններ:

Առաջին. Հետազոտության որոշ հատվածներ ցանկալի կլիներ շարադրել ավելի դյուրին և մատչելի էջ 69, 97:

Երկրորդ. Աշխատանքում նկատելի են որոշ լեզվական անհարթություններ՝ էջ 22, 111, 172 և այլն, ինչպես նաև տվյալների անճշտություններ՝ էջ 110, «Հայ-լեհական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման վրա նկատելի ազդեցություն ունեցավ 2013 թ. հունվարի 1-ին Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը»:

Երրորդ. Հարկ է նշել, որ գիտական աշխատանքներում ցանկալի չէ ներառել ոչ պաշտոնական տեղեկատվություն կամ հակառակ դեպքում դրանք պետք է հանգամանալից վերլուծության ենթարկվի՝ էջ 58:

Չորրորդ. Ներկայացված աշխատանքում առկա են նաև մի շարք տեխնիկական բնույթի վրիպակներ:

Հինգերորդ. Ցանկանում եմ նաև անհամաձայնություն հայտնել աշխատանքում ներկայացված որոշ դրույթների վերաբերյալ: Այսպես օրինակ աշխատանքի 35-37 էջերում նշված ձևակերպումները պրոտոկոլային են՝ առանց որևէ վերլուծության,

ավելի շատ ունեն նկարագրական բնույթ, ցանկալի կլիներ, որ այն վերլուծական բնույթի լիներ:

Հասկանալի է, որ մեր արտահայտած նկատառումներն ավելի շատ ցանկություններ են աշխատանքը ավելի որակով տեսնելու ակնկալիքով, որը ամենևին էլ չի նսեմացնում ատենախոսի իրականացրած, ըստ էության, հաջողված հետազոտությունը: Ուստիև գտնում ենք, որ Հենրի Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ներկայացվող պահանջներին և հեղինակը արժանի է իր հայցումն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ Վարչապետի աշխատակազմի
արտաքին կապերի վարչության
գլխավոր մասնագետ,
պ.գ.թ. Ս. Բաղդասարյան

Հարգելի Բաղդասարյան պրոֆեսոր
խորհուրդ եմ!
Հարգանքներս աշխատանքիս գրքերին և
ամբողջ կյանքիս կապակցությամբ հարգելի
պրոֆ. Յուր Հարգանքով

06.12.24թ